ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 7 հունիսի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Արմավիր ք. Արարատյան փողոց 5/7 մանկապարտեզ

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին 09.12.2015թ. ս/մ 7705 պայմանագիր; Անշարժ գույքը անհատույց տրամադրելու մասին 09.12.2015թ. ս/մ 7705 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 16.11.2017թ. ս/մ 7536 համաձայնագիր, Անհատույց օգտագործման պայմանագիր / համաձայնագիր/ 19.05.2021թ թիվ 3458

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-001-0340-0087
Մակերեսի չափը (հա)՝ 0.6651
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 07062021-04-0004, գաղտնաբառ՝ BZ59ADFS8QV8**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 04-001-0340-0087-001 | Մանկապարտեզ | 1014.5 քմ | ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 2 | 04-001-0340-0087-002 | Լողավազան | 92.96 քմ | ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

գույքը տրված է անհատույց օգտագործման անորոշ ժամկետով

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 07062021-04-0004, գաղտնաբառ՝ BZ59ADFS8QY8**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

Գ-րդ

№ 5-րդ




№ 1375921

Ք. ԱՐՄԱՎԻՐ Փ. ԱԲՈՎՅԱՆ

N 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆ




№ 9997349

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
<<ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(<<ՔԾՓԿ>> ԲԲԸ)

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼԻՑԵՆԶԻԱ 13527

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ, ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑ №7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ №5 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ - 2023

«ՔՇՓԿ» ԲԲԸ
N 12/22
«6» 02 2023թ.

«Հաստատում եմ»
«ՔՇՓԿ» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն
_________ Ա.Գյուլխասյան
«06» 02 2023թ.

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ Արմավիր մարզի Արմավիր քաղաքի Արարատյան փողոց N7 հասցեում գտնվող N5 մսուր-մանկապարտեզային համալիրի մասնաշենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ**

*Հետազննությունը կատարվել է Արմավիր համայնքի ղեկավար Դ.Խուդաթյանի* **N ԱՔ-ՄԱԾՁԲ-23/8** *առ 03.02.2023թ. կնքված պայմանագրի համաձայն:*

Համալիրը բաղկացած է 1970-ական թվականներին կառուցված, հարթ տեղանքի վրա զուգահեռ տեղակայված, երկու երկհարկանի, հատակագծում ուղղանկյունաձև, ~12,4x41,2մ եզրաչափերով առանձին մասնաշենքերից, որոնք հաղորդակցվում են միմյանց հետ շինարարական-դեֆորմացիոն կարաններով բաժանված երկու անցասրահ-սանդղավանդակներով (նկ.1):



Նկ. 1 Մսուր-մանկապարտեզի տեսքը անցասրահի կողմից

Մասնաշենքերն կողաձակատներում ունեն ~3,0x12,4մ հատակագծային չափերով 1-ին հարկում փակ, երկաթբետոնե ծածկով, իսկ երկրորդում՝ բաց պատշգամբներ՝ իրենց հովարածածկով:

Անցասրահ-սանդղավանդակներն երկհարկանի, հատակագծում ուղղանկյունաձև, ~6,8x14,8մ եզրաչափերով շինություններ են:

Մասնաշենքերի կոնստրուկտիվ համակարգերը լուծված են լայնական (կրող) ու երկայնական պատերով և միջհարկային ծածկերով, իսկ անցասրահ-սանդղավանդակներինը՝ միաձույլ երկաթբետոնե կարկասով, սանդուղքներով և վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնից:

Ներքին լայնական պատերն ունեն 40սմ հաստություն և իրականացված են կանոնավոր ձևի տուֆաքարի շարվածքով:

Պարփակող պատերն ունեն 45սմ հաստություն և իրականացված են համակցված տիպի շարվածքով (երեսաշարը՝ սրբատաշ, իսկ ներքինը՝ կանոնավոր ձևի տուֆաքարից):

Գետնախարսխի հատվածում պարփակող պատերի երեսաշարը «քուրքատաշ» բազալտաքարից է:

Պատերում բացվածքների բարավորները երկաթբետոնից են:

Ընդ որում երկայնական պատերում բարավորներ են հանդիսանում հակասեյսմիկ գոտիները:

Երկայնական պատերում պատուհանների լայնությունը ~5,0մ է, բարձրությունը՝ 2,1մ, իսկ դրանց միջև միջապատերի լայնությունը ~1,05մ է:

Միջհարկային ծածկերը հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերից են: Ծածկերի մակարդակում պատերի վրա առկա են հակասեյսմիկ գոտիներ:

Միջնորմները պեմզաբետոնե մանրաչափ սալերի շարվածքով են:

Հատակներն երեսված են փայտասալիկներով: Ընդ որում 1-ին հարկի հատակներն իրականացված են հետլիցքի վրա:

Անցասրահ - սանդղավանդակի սյուներն ունեն 30x30սմ չափերի լայնական հատվածքներ և դրանց հիմքերն առանձին տիպի են, միաձույլ երկաթբետոնե սյունակալներով:

Պարփակող պատերը գետնախարսխի հատվածում իրագործված են կարկասի լցվածքի ձևով, ժապավենային խամքարե հիմքերի վրա: Վերին հատվածներում դրանք ապակե բլոկների շարվածքով են:

Վերնածածկը հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերից են:

Սանդուղքները լուծված են միաձույլ երկաթբետոնե հարթակներով, պողպատե թեքահեծաններով և երկաթբետոնե հատավոր աստիճաններով:

Մասնաշենքերի և անցասրահ - սանդուղքների տանիքները լանջավոր են, փայտե ծպեղային համակարգով, ալիքավոր ասբոշիֆերից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Հետազննությամբ պարզվեց հետևյալը՝

- Մասնաշենքերում և անցասրահ-սանդղավանդակներում վերջին տարիների կատարվել են մասնակի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, որի ընթացքում փոխվել են տանիքածածկույթի և ջրհորդանների մի մասը, որոշ պատուհաններ, անցասրահներից մեկում պարփակող պատը փոխարինվել է տուֆաքարի շարվածքով, մասնաշենքերի որոշ մասում իրականացվել են ներքին հարդարման աշխատանքներ: Ընդ որում մասնաշենքերի զգալի մասն և մեկ անցասրահը ներկայումս օգտագործվում է այլ կազմակերպության կողմից:

- Կոնստրուկտիվ լուծումներում առկա թերությունների և անորակ շինարարության հետևանքով ձախակողմյան (բակի) մասնաշենքի բակային պատի զգալի հատվածը (~12,0մ չափով) շենքի ամբողջ բարձրությամբ տարանջատվել է լայնական պատերից և ծածկասալերից ու շեղվել ուղղաձիգ հարթությունից (նկ. ): Մասնաշենքի 2-րդ հարկի առաստաղի մակարդակում առաջացած բացակը ծայրային մասերում ունի ~3-5մմ լայնություն, իսկ միջին հատվածում՝ 35մմ (նկ.2):



Նկ. 2



Նկ. 2 2-րդ հարկի պատամասի տարանջատումը ծածկից և պատերից

- Երկայնական պատերի որոշ տեղամասերում առկա են առանձին քարերի տեղաշարժ և թափում, ինչպես նաև սառնաքայքայում: Աջակողմյան պատշգամբի պարփակող պատի անկյունային հատվածում (նայել բակի կողմից) ամբողջ բարձրությամբ առկա է մինչև 1,5մմ բացվածքով ուղղաձիգ միջանցիկ ճաք:
- Առաստաղների որոշ տեղամասերում ծածկասալերը տեղաշարժված են միմյանց նկատմամբ և դրանց կցվածքներում առկա են 2մմ լայնությամբ բացակներ (նկ.3):



Նկ.3 Ծածկասալերի կցվանքների վիճակը

- Ջրհորդանները փոխվել են կիսով չափ և դրանք չունեն բարձակային հատվածներ, որի պատճառով պատերն այդ տեղամասերում թրջվում են(նկ.4):



Նկ.4 Փոխված ջրհորդանների տեսքը

- Չփոխված պատուհանները հնամաշ են և ունեն տարբեր բնույթի վնասվածքներ (նկ.5):



Նկ. 5 Պատուհանների վիճակը

- Պատշգամբների հովարածածկերը ունեն վնասվածքներ կամ բացակայում են(նկ.6):



Նկ. 6 Պատշգամբների հովարածածկերի վնասվածքները

- Հատակները հնամաշ են, ունեն վնասված տեղամասեր:
- Մսուր-մանկապարտեզային համալիրը լինելով 1970-ական թվականների կառույց իր ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներով չի համապատասխանում գործող ՀՀՇՆ 20.04 («Երկրաշարժադիմացկուն շինարարություն») նախագծման նորմերի որոշ դրույթներին, մասնավորապես`

1. Պատուհանների լայնությունը 3,0մ փոխարեն 5,0մ է:
2. Լայնական պատերի ազատ թռիչքները 8,0մ փոխարեն 11,5մ է:
3. Միջհարկային ծածկերում հորիզոնական հարթության մեջ կոշտությունը չի ապահովված:

Ելնելով հետազննության արդյունքներից եզրահանգվում է, որ համալիրի մասնաշենքերի տեխնիկական վիճակը ընդհանուր առմամբ գնահատվում է անբավարար, իսկ վնասվածության մակարդակը ըստ գործող շինարարական նորմերի դասվում է 3-րդ աստիճան:

Համալիրի հետագա բնականոն և անվտանգ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետյալ տեխնիկական միջոցառումները, մասնավորապես`

- Պատերում առկա ճաքերի մեջ ներարկել պոլիմերցեմենտային շաղախ:
- Պատերի երեսաշարի քարաթափված տեղամասերը վերականգնել վերաշարմամբ կամ միաձույլ բետոնով:
- Վերականգնել կիսով չափ իրագործված ջրհորդանները և դրանց ստորին մասերում իրականացնել բարձակային հատվածներ:
- Ելնելով համալիրի գործառնական նշանակությունից իրականացնել մասնաշենքերի սեյսմազինվածության մակարդակի ավելացմանը ուղղված համապատասխան տեխնիկական միջոցառումներ, մասնավորապես՝

1. Պատուհանների լայն բացվածքներն երիզել միաձույլ երկաթբետոնե շրջանակներով կամ դրանց փոխարեն բացվածքների մեջտեղում իրականացնել որմնապատերով կամ միաձույլ բետոնով լրացուցիչ 1,5մ լայնությամբ միջապատեր, հուսալի խարսխելով կից կոնստրուկցիաներին:

2. Մասնաշենքերի բոլոր պատերն ուժեղացնել ներքիններն երկկողմանի, իսկ արտաքինները՝ միակողմանի (ցեմենտե շաղախից) ամրանվորված տորկրետ սվաղով (շապիկով): Ընդ որում միևնույն պատի երկու կողմերի շապիկները պետք է կապվեն միմյանց Z-աձև պողպատներով: Միակողմանի շապիկների ամրանաձողերը Г-աձև պողպատների միջոցով պետք է 7÷8սմ խորությամբ կապվեն երեսաշարի քարերի հետ: Առանձնապես խնամքով իրականացնել պատի շեղված հատվածամասի ճաքերի մեջ պոլիմերցեմենտային շաղախի ներարկելուն (1-ին և 2-րդ հարկերում): Այդ հատվածի միակողմանի շապիկի ամրանաձողերը Г-աձև պողպատով խարսխելուց հետո դրանց ամրանացանցերը պետք է 1,5մ չափով հուսալի կապվեն լայնական պատերի շապիկների ամրանացանցի հետ: Ընդ որում շապիկները պետք է սկսեն հիմքերի առաջին շուրթից և ընդգրկեն բացվածքների շեպերը, իսկ դրանց ամրանաձողերը 2 հարկերում պետք է լինեն շարունակական:

3. Միջհարկային ծածկերի վրա մանրահատիկավոր բետոնից իրականացնել 5÷6սմ հաստությամբ ամրանավորված շերտ, հուսալի կապելով ծածկասալերի հետ:

4. Նորոգել պատշգամբների հովարածածկերը կամ իրականացնել նորը:

Բոլոր աշխատանքները կատարել ըստ գործող շինարարական նորմերի մշակված և սահմանված կարգով, համաձայնեցված նախագծի

Առաջատար ճարտարագետ՝ Հ.Մկրտչյան

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 17211
(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(գործունեության տեսակը)

Տրված է « 07 ՀՈՒՆԻՍԻ 2019թ.» « ՎԱՆԱՐԽ » ՍՊԸ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՏԱԹԵՎԻ Փ., 14
(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրություն) Կ.Տ.

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ
(անուն, ազգանուն)

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ * 02565827 *

ԾԲԴ - Ա-0276

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

## ԵՆԹԱԴԱՍ «Ա»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

## ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԱՏՈԼԻ

Ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում առանց սահմանափակումների,
բացառությամբ տարածական պլանավորման փաստաթղթերի,
պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման,
ամրակայման և օգտագործման նախագծերի մշակման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

ՏՐՎԱԾ Է 13.08.2022
ԱՆԺԱՄԿԵՏ

ԿԱԴ - Ա1-034

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

### ԵՆԹԱԴԱՍ «Ա1»

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ - ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

## ԳՈՒԼԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԳՈՒՐԳԵՆԻ

Սահմանափակումներ՝ Արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավել 16 հարկից, մինչև 51մ բարձրությամբ շենքեր, մինչև 50մ թռիչքով տարածական կոնստրուկցիաներով շինություններ, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ, որոնք համապատասխանում են մինչև IV ռիսկայնության աստիճանի, բացառությամբ քաղաքաշինական նորմատեխնիկական փաստաթղթերով սահմանային հարաչափերը (բարձրություն, երկարություն, լայնություն) գերազանցող շենքերի և կառույցների:
Վերը նշված վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՏՐՎԱԾ Է 03.10.2019
ԱՆԺԱՄԿԵՏ

## *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*


1. Ընդհանուր դրույթներ
2. Կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ
3. Հիմնական աշխատանքների իրականացման եղանակներ
4. Առաջարկություն շինարարության մատակարարման վերաբերյալ
5. Իրականացվող աշխատանքների որակի հսկում
6. Անվտանգության տեխնիկայի հարցեր և հակահրդեհային միջոցառում
7. Շրջապատի միջավայրի պահպանում
8. Ժամանակավոր էլ. էներգիա և ջրամատակարարում
9. Աշխատանքների կատարումը ձմռան պայմաններում
10. Շինարարության տևողության ժամկետները
11. Շինարարության համար անհրաժեշտ մեխանիզմների և սարքավորումների անվանացանկ

## *Շինհրապարակի նախապատրաստման աշխատանքներ*

Ընդհանուր աշխատանքներին ծանոթանալուց և տեղազննումը կատարելուց հետո պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է շինարարությունը սկսելու թույլատվություն և դրա հիման վրա հրանգ է տալիս կապալառու կազմակերպությանը սկսելու շիանարարական աշխատանքները: Մինչ դրանք սկսելը կապալառուն պետք է՝

1. Նախօրոք համապատասխան ծառայությունների հետ համաձայնեցնի շինարարության համար աշխատող տրանսպորտային միջոցների և շրջական շենքերին մոտենալու հնարավորությունները:
2. Շինհրապարակի տարածքում առկա ստորգետնյա ինժեներական հաղորդակցուղիների՝ էլեկտրական և կապի մալուխների, ջրատարների, գազատարների և այլնի բացման համար դրանք շահագործող կազմակերպություններից ստանա թույլտվություն:
3. Տեղական ինքնակառավարման մարմնի հողաշինարարի մասնակցությամբ տեղում ճշտի և փաստաթղթավորի հողամասի չափերը, ինչպես նաև բոլոր այն աշխատանքների անվանումներն ու ծավալները, որոնք իրականացվելու են տարածքն ազատելու համար: Փաստաթղթում մանրամասն պետք է նշվի նաև կտրվող կամ տեղափոխվող ծառերի քանակը, թփուտներից և մացառուտներից մաքրվող տարածքների սահմանները, տարածքում գտնվող քանդման ենթակա կառույցների անվանումը, դրանց քանդումից վերադարձվող նյութերի անվանացանկն ու քանակները: Շինարարության նախապատրաստման աշխատանքները սկսելուց առաջ պետք է ճշտել.

ա) շինարարության կարիքների համար տեղում գոյություն ունեցող տրանսպորտային և ինժեներական հաղորդակցուղիների և կառույցների օգտագործման հնարավորությունները

բ ) տեղի շինանյութերի առավելագույնս օգտագործելու հնարավորությունը

գ) շինարարական աշխատանքներում տեղի կազմակերպություններին ներգրավելու հարցերը

Շինհրապարակի ներհրապարակային աշխատանքներից է գեոդեզիական հիմքի ստեղծումը, տարածքի մաքրումն ու ինժեներական նախապատրաստումը՝ տարածքի հարթեցումը, գոյություն ունեցող՝ ինժեներական հաղորդակցուղիների տեղափոխումը, ջրի, էլեկտրականության մատակարարման հարցերի լուծումը:

Նախապատրաստական աշխատանքները պետք է միահյուսված լինեն հիմնական շինարարական աշխատանքների հետ և պայմաններ ստեղծեն զուգահեռ շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Նախապատրաստական աշխատանքների ավարտը պետք է նշված լինի աշխատանքների վարման մատյանում: Շինարարության էլեկտրամատակարարումն ընդհանուր առմամբ պետք է կատարվի գոյություն ունեցող կամ կառուցվող հիմնական ցանցերից: Որպես ժամանակավոր աղբյուրներ (շարժական էլեկտրակայանները) հնարավոր է իրականացնել էլեկտրակայանների

միջոցով մինչև կառույցի շահագործման հանձնումը: Ժամանակավոր էլեկտրական գծերը պետք է անցկացնել օդով՝ հնարավորինս օգտագործելով տեղափոխվող տրանսֆորմատորներ և սյուներ: Եթե օդային գծերը խանգարում են շինարարական աշխատանքներին, ապա էլեկտրամատակարարման գծերը կարելի է անցկացնել խրամուղիներում:

*Շինմոնտաժային աշխատանքների իրականացումը ձմռան պայմաններում*

- Ձմռանը բետոնային աշխատանքների իրականացման ժամանակ բետոնի խառնուրդը մինչև միաձույլ կոնստրուկցիան լցնելը պետք է ունենա $+25^0$ C $+45^0$ C դրական ջերմաստիճան:
- Էլեկտրոտաքացման եղանակով բետոնի էլեկտրաջերմային շաղկապումն իրականացվում է ցանկացած կոնստրուկցիայի համար: Նախքան էլ. տաքացում բետոնի ջերմաստիճանը պետք է լինի ոչ պակաս +50 C: Բետոնի մեջ տեղադրված էլեկտրոդներ ֆազավորվում են ըստ խմբերի, բացառելով էլեկտրոդների և կոնստրուկցիայի ամրանի կարճ միացումը: Էլ. տաքացման հոսանքի լարման մեծությունը չպետք է գերազանցի 110 վոլտից: Էլեկտրոդները լարման տակ են դրվում բետոնացված կոնստրուկցիան պարկերով ծածկելուց և տեղամասից աշխատողների հեռանալուց հետո:
- Եռակցողը պետք է ունենա առնվազն 5-րդ կարգի որակավորում

*Ժամանակավոր էլ. էներգիա և ջրամատակարարում*

- Ներքին ախատանքներ իրականացնելիս՝ էլ. էներգիայի սնուցումը նախատեսված է դպրոցի շենքը սնող գոյություն ունցող էլ. վահանից, իսկ ջրի օգտագործումը՝ դպրոցի սանհանգույցները սնող ջրի դիտահորից
- Շինարարության համար ժամանակավոր էլ. էներգիայի և ջրի պահանջարկը որոշվում է նորմատիվային ծախսերի հիման վրա ըստ հզորությունների:

Ջրի պահանջարկը - 0.5 լ / վ

Էլ. էներգիա - 10 կվտ / ժ

***Շինարարության օրացույցային պլան***

Շինարարության տևողությունը որոշված է համապատասխանաբար ՇՆուԿ 1-04-03,85 ընդհանուր դրույթների հիման վրա՝ կիրառելով միջարկման մեթոդը և հաշվի առնելով նախապատրաստական աշխատանքները շինարարության, ինչպես նաև քանդման աշխատանքների տևողությունը:

Ընդհանուր շինարարության տևողությունը T = 9 ամիս

***Անհրաժեշտ ժամանակավոր շինություններ***

Շին. մոնտաժային աշխատանքները բավարար պայմաններում իրականացնելու համար շինհրապարակում նախատեսվում է տեղադրել ժամանակավոր շինություններ՝

| *Անվանումը* | *Քանակը* | *Չափը* | *Տեսակը* | *Մակերեսը* |
|---|---|---|---|---|
| Հանդերձարան | 1 | 10x3.2x2.5 | հավաքովի | 32.0 |
| Սննդի ընդունման սենյակ | 1 | 10x3.2x2.5 | հավաքովի | 32.0 |
| Աշխղեկի տնակ | 1 | 6x3x2.5 | շարժական | 18.0 |
| Տեխ. հսկիչի տնակ | 1 | 6x3x2.5 | շարժական | 18.0 |
| Նյութատեխնիկական պահեստ | 1 | 6x3x2.5 | շարժական | 18.0 |
| Մետաղական ծածկարան | 1 | 9x3x2.5 | շարժական | 27.0 |

***Շինարարության համար պահանջվող հիմնական մեքենա - մեխանիզմները և սարքավորումները***

| *Հ/հ* | *Անվանումը* | *Մակնիշը* | *Քանակը* |
|---|---|---|---|
| 1. | Էքսկավատոր | Cat | 2 |
| 2. | Բուլդոզեր | ДЗ-42-/АТ-75/ | 1 |
| 3. | Բարձող մեքենա /погрузчик/ | ТО-18 | 1 |
| 4. | Շարժական կոմպրեսոր | ЗИФ-55В | 1 |
| 5. | Ավտոկռունկ | ÊÑ-5576Á | 1 |
| 6. | Ձեռհար մուրճ | ИО-10 | 2 |
| 7. | Թրթիռ խորքային էլեկտրական | ИВ-102А | 3 |
| 8. | Թրթիռ խորքային | И-697 | 1 |
| 9. | Գազաեռակցման ագրեգատ | ՄՈՉ-1.2 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | Տոփանիչ | CR 3/60 | 2 |
| 11. | Ինքնաթափ մեքենա | կամազ 5511 | 2 |
| 12. | Բետոնախառնիչ մեքենա | կամազ ÑÁ 92 | Ըստ հաշվարկի |
| 13. | Գլդոն /каток/ | | 1 |
| 14. | Շաղախախառնիչ | V - 250 | 1 |
| 15. | Էլ. եռակցման սարք | USԷ - 34 | 2 |

# *Նյութերի տեխնիկական մասնագիր*

| *Հ/հ* | *Նյութերի անվանումը* | *Պետական ստանդարտ* | *Տեխնիկական բնութագիր* | *Աշխատանքային ռեսուսներ* | *Երաշխիքային ժամկետ տարի* | *Պահանջվող լիցենզիա* |
|---|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *6* | *7* | *8* |
| 1. | Կերամիկական սալիկ | 6141-82 | ջրակլանում մինչ– 16% ջերմակայունություն մինչ– 150° C | 2 անձ, սալիկապատող 4-րդ կարգի | 5 | շինարարության |
| 2. | Փայտանյութ | 2140-71 | սոճի 2-րդ տեսակի, խոնավությունը 18% ամրության սահմանը ըստ սեխման 415կգ-սմ$^2$ | 2 անձ, հյուսն 4-րդ կարգի | 5 | շինարարության |
| 3. | Ցինկապատ թիթեղ | 14918-80 | 1-ին դասի, ցինկային երեսվածքի հաստությունը 40մկմ | 2 անձ, թիթեղագործ 4-րդ կարգի, 6-րդ կարգ | 10 | շինարարության |
| 4. | Լատեքս | 14498-72 | լուծվում է աղաթթվում, առաջացնում է աշխաթթու գազ, կայուն է ծծմբաջրածնային միացություններին | 3 անձ, ներկարար 4-րդ կարգի, 5 -րդ կարգ | 5 | շինարարության |
| 5. | Բազալտ | 9479-84 | խտությունը 2.7 ՎՆ 3.3գ -սմ$^3$ ծավալային զանգվածը 2000 ՎՆ 2300կգ - մ$^3$ ջրակլանումը 1-4.9% ամրության սահմանը ըստ սեղման 40 ՎՆ 200մպա | 4 անձ, պատդիր 4-րդ կարգի, 6 -րդ կարգ | 10 | շինարարության |
| 6. | Շինարարական գաջ | 125-70 | տեսակարար կշիռը 2.5-2.8գ-սմ$^3$ ծավալային կշիռը 800-1100կգ-մ$^3$ | 2 անձ, ծեփագործ 4-րդ կարգի | 5 | շինարարության |
| 7. | Բետոն | 74373-85 | մանրահատիկ բետոն , բետոնի շարժունակությունը 6-8սմ , բետոնին դասը B 7.5 | 2 անձ, բետոնագործ 4-րդ կարգ | 5 | շինարարության |
| 8. | Մետաղապլաստե դուռ | ISO 9001 | Նվազագույնը չորս խցիկանի պրոֆիլ, հաստությունը 60 մմ, 4+4 մմ փայլատ ապակեփաթեթով | 2 անձ, դուռ տեղադրող | 5 | Շինարարության |
| 9. | Մետաղապլաստե պատուհան | ISO 9001 | Նվազագույնը չորս խցիկանի պրոֆիլ, հաստությունը 60 մմ, ջերմակամուրջով, 4+4 մմ փայլատ ապակեփաթեթով | 2 անձ, դուռ տեղադրող | 5 | Շինարարության |

# Նյութերի տեխնիկական մասնագիր

| Հ/հ | Նյութերի անվանումը | Պետական ստանդարտ | Տեխնիկական բնութագիր | Աշխատանքային ռեսուրսներ | Երաշխիքային ժամկետ տարի | Պահանջվող լիցենզիա |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 6 | 7 | 8 |
| 1. | Էլեկտրական ջրատաքացուցիչ | ISO 9001:2000 | Հզոր.-9.0 կՎտ, Էլ. սնուցումը՝ 220 Վ | 2 անձ, էլեկտրական ջրատաքացուցիչ | 5 | Էներգետիկ |
| 2. | Պոլիպրոպիլենե խողովակներ | DIN 8078 | Աշխատանքային ճնշումը մինչ– 10 բար | 2 անձ, ջեռուցման համակարգի մոնտաժող | 10 | Էներգետիկ |
| 3. | Պոլիպրոպիլենե ձ–ավոր մասեր | DIN 16962 | Աշխատանքային ճնշումը մինչ– 10 բար | 2 անձ, ջեռուցման համակարգի մոնտաժող | 8 | Էներգետիկ |
| 4. | Արույրե փականներ | EN 13828 | Աշխատանքային ճնշումը մինչ– 10 բար | 2 անձ, ջրի համակարգի մոնտաժող | 10 | Հիդրո |
| 5. | Ալյումինե մարտկոցներ | ISO 14001 | Ջերմատվությունը՝ 190 Վտ, 0.45 էկմ | 2 անձ, ջեռուցման համակարգի մոնտաժող | 10 | Էներգետիկ |
| 6. | Ջրի խառնիչ | ISO 9001 | Աշխատանքային ճնշումը մինչ– 10 բար | 2 անձ, ջրի համակարգի մոնտաժող | 5 | Հիդրո |
| 7. | ՊՎՔ նյութից երեսապատման էլեմենտներ | ISO 14001 | Հաստությունը 3 մմ | 2 անձ, հարդարման աշխատանքներ իրականացնող | 5 | Շինարարության |

# ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500






## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. ՇԻՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇԻՆ. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ
2. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՒՄ Է ՇԻՆ-ՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ ԿԱՄ ՆՐԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՆՁԸ
3. ՇԻՆ. ՀՐԱՊԱՐԱԿԸ ՊԵՏՔ Է ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐԵԼ ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐՈՎ

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԱՎՏՈԱՄԲԱՐՁԻՉ КС-5576Б
- ՑԵՄԵՆՏԻ ԱՐԿՂ
- ՇԱՂԱԽԱԽԱՌՆԻՉ V=250 լ
- ԲԵՏՈՆԵ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԲՈՒՆԿԵՐ
- Ե/Բ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ՊԱՀԵՍՏ
- ԱՎԱԶԻ ԽՃԻ ՊԱՀԵՍՏ
- ԷԼ. ՎԱՀԱՆԱԿ
- ԼՈՒՍԱՐՁԱԿ

| N | Անվանումը | Քանակը | Չափը | Տեսակը | Մակերեսը |
|---|---|---|---|---|---|
| 4 | Աշխղեկի տնակ | 1 | 6x3x2.5 | շարժական | 18.0 |
| 5 | Հանդերձարան | 1 | 10x3.2x2.5 | հավաքովի | 32.0 |
| 6 | Սննդի ընդունման սենյակ | 1 | 10x3.2x2.5 | հավաքովի | 32.0 |
| 7 | Նյութատեխնիկական պահեստ | 1 | 6x3x2.5 | շարժական | 18.0 |
| 8 | Տեխ. հսկիչի տնակ | 1 | 6x3x2.5 | շարժական | 18.0 |

## ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ճոճանակ հավասարակշռող - 3 հատ
2. Ճոճվող ճոճանակ - 3 հատ
3. Ճոճանակ պտտվող - 3 հատ
4. Մանկական խաղի կոմպլեկտ /սղարան, ճոճվող ճոճանակ և բասկետբոլի վահան - 3 հատ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարան

ՊԱՏՎԵՐ՝ ԱՔ-ԳՀԾՔ-24/2

ՀԱՏՈՐ՝ 1

„ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ„ ՀՈԱԿ-ի հիմնանորոգում

| ՓՈՒԼ ЭТАП | ԹԵՐԹ ЛИСТ | ԹԵՐԹԵՐ ЛИСТЫ |
|---|---|---|
| ԱՆ | ՇՎՆ-1 | |

ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՎԱՆԱՐԽ VANARKH ВАНАРХ

| ՓՈՓ. | ՄԱՍ. ՔԱՆ. | ԹԵՐԹ | ՓԱՍՏԱԹ.N | ՍՏՈՐԱԳՐ. | ԱՄՍԱԹԻՎ |
|---|---|---|---|---|---|
| Ճարտարապետ | | Ա.Ղուկասյան | | | |
| ՆԳՖ | | Ա.Ղուկասյան | | | |
| Նախագծող | | Խ.Գրիգորյան | | | |
| Ստուգեց՝ проверил | | Ա.Ղուկասյան А. Гукасян | | | |

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | | ԱՄԻՍՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | | | | 2 | | | | 3 | | | | 4 | | | | 5 | | | | 6 | | | | | | 7 | | | |
| | | ՇԱԲԱԹՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| 1 | ՔԱՆԴՄԱՆ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | ՇԵՆՔԻ ԿՐՈՂ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԵՎ ԾԱԾԿԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | ԴՌՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽՈՒՄ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | ՆԵՐՔԻՆ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | ՆԵՐՔԻՆ ԷԼ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 9 | ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 10 | ԱՐՏԱՔԻՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 7 ԱՄԻՍ /210 ՕՐ/

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարան | ՊԱՏՎԵՐ՝ ԱՔ-ԳՀԾՁԲ-24/2 | | ՀԱՏՈՐ՝ 1 |
| | | | | | | ,,ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի հիմնանորոգում | | | |
| ՓՈՓ. | ՄԱՍ. ՔԱՆ. | ԹԵՐԹ | ՓԱՍՏԱԹ.N | ՍՏՈՐԱԳՐ. | ԱՄՍԱԹԻՎ | | ՓՈՒԼ ЭТАП | ԹԵՐԹ ЛИСТ | ԹԵՐԹԵՐ ЛИСТЫ |
| | | | | | | | ԱՆ | ՇԿՆ-1 | |
| Ճարտարապետ | | Ա.Ղուկասյան | | | | ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | | |
| ՆԳՃ | | Ա.Ղուկասյան | | | | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՎԱՆԱՐԽ VANARKH ВАНАРХ | | |
| Նախագծող | | Խ.Գրիգորյան | | | | | | | |
| Ստուգեց՝ проверил | | Ա.Ղուկասյան А. Гукасян | | | | | | | |